**Ի գիտություն հասարակությանը**

**ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:**

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-261-Ն և «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-262-Ն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված նոր իրավակարգավորումները վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև իրականացվող էլեկտրական էներգիայի փոխհոսքերի շրջանակում հատուցում տրամադրելու կարգում և պայմանագրի օրինակելի ձևում ներառելու նպատակով՝ նախատեսվում է լրամշակել հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի N344Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնների 11-րդ բաժինը («Ինքնավար արտադրողներին հատուցման տրամադրումը») և 2016 թվականի հոկտեմբերի 5-ի N273Ն որոշմամբ հաստատված՝ «Էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման (Ինքնավար էներգաարտադրող - Բաշխող)» պայմանագրի օրինակելի ձևը: Միաժամանակ, «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-262-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նոր իրավակարգավորումները հանձնաժողովի կողմից իրականացվող լիցենզավորման գործընթացում կիրարկելու նպատակով կլրամշակվի նաև հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի N374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը:

Նախատեսվում է իրականացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն

էլեկտրական ցանցին միացման եռամսյակային ցուցանիշների ուսումնասիրություն, ամփոփում և համապատասխան ձևաչափով տեղեկանքի կազմում: Նշված գործառույթի իրականացումն ուղղված է էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման ընթացակարգի վերլուծությանը, միացման ժամկետների պահպանման վերահսկողությանն ու դրանց խախտման պատճառների որոշմանը: Գործառույթի իրականացման նպատակն է բարձրացնել էլեկտրական ցանցին միացման գործընթացի կազմակերպման արդյունավետությունը:

Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկային համապատասխան, կվերանայվեն վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Նախատեսվում է լրամշակել ջրային ոլորտում գործունեություն իրականացնող անձանց կողմից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը և ձևերը, որի նպատակն է 2017 թվականի ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագների ճշգրտման սկզբունքներում կատարված փոփոխությամբ և ընկերության գործունեության կարգավորման ժամանակ ի հայտ եկած խնդիրներով պայմանավորված անհրաժեշտ տեղեկատվության պարբերաբար ստացումը, ինչպես նաև տեղեկատվությունների ներկայացման ընթացակարգի հստակեցումը:

Մատակարարի կողմից հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկների փոփոխությունները վերահսկելու նպատակով՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իր սպասարկման տարածքի հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկները կներկայացվեն հանձնաժողովի համաձայնեցմանը:

Կլրամշակվեն գազամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգը և ձևերը, որի նպատակն է՝ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի կարգավորումներում տեղի ունեցած

փոփոխություններով պայմանավորված անհրաժեշտ տեղեկատվության պարբերաբար ստացումը, ինչպես նաև տեղեկատվությունների ներկայացման ընթացակարգի հստակեցումը:

Նախատեսվում է իրականացնել էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպասարկման որակին վերաբերող տեղեկատվության հավաստիության ընտրանքային ուսումնասիրություն, որի նպատակն է ուսումնասիրել հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաքագրման ընթացակարգի առկայությունը, տեղեկատվության հավաքագրման գործընթացի իրականացման, ինչպես նաև հավաքագրված և ամփոփված ցուցանիշների համապատասխանությունը հանձնաժողով ներկայացված տեղեկատվությանը: Ուսումնասիրության վերջում կնախապատրաստվեն արձանագրություններ, որոնք կհրապարակվեն հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Կամփոփվի և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվի հանրային կազմակերպությունների 2018 թվականի գնումների պլանների մոնիթորինգի արդյունքների մասին վերլուծական տեղեկանքը, որն իրականացվում է հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշման №1 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանների համապատասխանությունը հանձնաժողովի նույն որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին գնահատելու համար: Հանրային կազմակերպությունների գնումների պլանի մոնիթորինգը ներառում է հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատումը:

Նախատեսվում է մշակել Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի ապահովման աշխատանքների իրականացման վերաբերյալ վերլուծական տեղեկանք, որն ուղղված է ՀՀ տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի գնահատմանն ու շարժական կապի ցանցերի և ծածկույթների շարունակական արդիականացմանը:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կամփոփվի և մինչև սույն թվականի մայիսի 1-ը մամուլում կհրապարակվի հանձնաժողովի 2017 թվականի գործունեության հաշվետվությունը:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: